

ՊԱՏՄԱԿԱՆ**ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԱԿՈՊՈՍ ՍԻՆԵԱՅ****ՈՒՆՏԱԽՈՐ ԵՐՈՒՍԱԼԷՄԻ ՈՒ ՆԱՀԱՏԱԿ Ի Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ**

— 1261 —

Սինեայց Սարգիս Արքեպիսկոպոս, ըստ վկայութեան Օրբելեան Ստեփանոս պատմիչին, 1216 թուականին կը հիմնարկէ Նորավանքին մէջ, Ս. Նախավկային տաճարը և եօթն տարինեւ ընթացքին կ'աւարտէ զայն սրբաշաղան յօրինուած քովօ. Նոյն պատմիչը կ'ըսէ նաև որ Սարգիս Արքեպիսկոպոս այս հոյակապ շինարարութենէ վերջ կը ճամբորդէ դէպի Կիրիկիա Հայոց Հեթում թագաւորի մօտ, որմէ մեծ պատիւ կ'ընդունի, ժամանակ մը հոն կը մնայ եւ կը մեկնի Երուսաղէմ յիւստ և յերկրպագութիւն Յիսուսի Ս. Գերեզմանին և Աստուածակոխ Ս. Տեղեաց, եւ զգաստ է զանկիւն պարգեւն՝ զազն սրբոյ նախավկային Սեւփանոսի։ Փրանկէ մը առած էր այս մասունքը վանքի Նոյն ժամանակ ֆրանկները կը տրբէին Ս. Քաղաքին։ Նոյն մասունքի վրայ արձանագրութիւն մը կար ֆրանկ, յոյն և ասորի գրերով, որմէ կը հասկըցուէր թէ մասունքը Ս. Նախավկայինն էր. եւ կը զրկէ զայն Նորավանք, եւ որ կը մնայ Նոյն վանքին եկեղեցիին մէջ։ Պատմիչը դարձեալ կը շարունակէ ու կ'ըսէ թէ Նոյն ժամանակ իորազմեանք գրաւեցին Երուսաղէմը ֆրանկներէն, և սոսկալի կոտորածներ տուին և Ս. Յարութեան տաճարը արհամարիցուցին և երբ երանելի Սարգիս Արքեպիսկոպոս Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ իր երեք ընկերներով սաղմուսեղութեամբ կը պարսպէր գլխատեցին և Քրիստոսի Դիւքզմանին կափարէլին վրայ արիւնը թափուեցաւ, և այսպէս մարտիրոսակա՛ն արեամբ ձգտակեցաւ ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ։

Սալաէտտին (1169—1193) Երուսաղէմի գրաւումէն յետոյ հաստատեց էյուլայիս թագաւորութիւնը Նեփտոսի մէջ, բայց անոր յաջորդները տարաբան և չկարողացան պաշտպանել Երուսաղէմը. այդ պատճառաւ

Քէրէկի և Դամասկոսի իսլամ իշխանները գործակցութեամբ ֆրանկներուն, գրաւեցին Երուսաղէմի, Հարէմ էլ—Շէրիֆը, Տիրբեա և Ասկազոնը։ օմրանկները, կ'աւելցնէ տարա պատմիչ Մաքրիզին, 1360—1442, վերաշինեցին այս քաղաքներուն պարիսպները և բերդերը, տիրացան Երուսաղէմի Քուպպէթ Էս—Սաֆրային, և էլ—Ազալայի մզկիթին վրայ զանգակներ գետեղեցին։ Բայց հետեւեալ տարին այս գէպը վերջ կը գտնէ սոսկալի հարուածներու տակ խաւրովեանց որ փախուստ տուին առէնէն՝ այն Մոնկոլներուն՝ որ Նէճմէտտին Սուլթանին միջոցաւ Նեփտոսի օգնութեան կոչուեցան։ Վարդգէմեանք յարձակեցան Երուսաղէմի վրայ, սրէ անցուցին այն բոլոր քրիստոնեաները որ հոն կը բնակէին, սպանեցին բազմաթիւ ալիքներ, գերի վարեցին կիները և տղաքը, աւերեցին այն սուրբ նուիրական վայրերը որոնք կը գտնուէին Ս. Յարութեան տաճարին մէջ, կործանեցին քրիստոնէից գերեզմանները և այրեցին մեռելոց ոսկերիտքը (Jerusalem Nouvelle, Բ. հատոր, էջ 977, PP. H. V. et M. A.)։ Խարիզմեանք թաթար վաչկատուն բազմութիւն մ'էին, որոնք հեռունեքէ գալով արշաւեցին Երուսաղէմ եւ մեծ կոտորած մը տուին քրիստոնէից եւ այդ ժամանակ ըստ Օրբելեան պատմիչին, Սարգիս Արքեպիսկոպոս Սինեայց եւ անոր երեք ընկերները նահատակուեցան Ս. Յարութեան տաճարին Քրիստոսի Ս. Գերեզմանի կափարէլին վրայ սաղմոսեղութեան պահուն։

Այժմ քանի մը ծանօթութիւններ պիտի տանք Սարգիս Արքեպիսկոպոսի արդիւնաբար գործունէութեան և Նորավանքի(*) պայ-

(*) Նորավանքը կը գտնուէր Սինեայց Ամաղու գիւղին մէջ։

Ամաղուն փառքի գետակի ձախ ափին՝ հարթ բարձրադիր դաշտի մը վրայ է։ Սա իր բոլոր ուսմանով և հոյակաւոր վանքով այժմ կը պատկա-

ծառացման մէջ, հետեւելով Օրբելեան պատմիչին: Ի սկզբան Նորափանքի մօտ կար Փուկաս Հայրապետի անունով եկեղեցի մը, որուն բնմին ներքեւէն կը բղխէր ջուր և ձէթ բշշարար, ըստ աւանդութեան: Ս. Փոկաս Հայրապետին նշխարները հոն բերուեցան և զետեղուեցան, այդ պատճառաւ նոյն տեղին անունը կոչուած է Փոկաս: Առաջին անգամ 1105ին Յովհաննէս Նպիսկոպոս մը Պարսից Մանուս Սուլթանէն անձամբ ֆերման եւ Մեհետը կ'ստանայ Նորափանքի անապատին համար: Յովհաննէս Նպիսկոպոս սահմանակիցներէն կը գնէ հողեր և անգաստաններ: Մեծ գործունէութեան մը յիշատակը ձգելով կը վախճանի ՈՒ (1155)ին և կը թաղուի Նուրափանքի մօտերը: Անոր կը յաջորդէ ՏէրբՍտեփանոս Շնորհալից որ կոչուած է Փախրէլ Մահ: ան իր Աթոռը կը փոխադրէ և կը բնակի Նորափանք. վանդի հին աթոռը աւերակ էր. մեծ Աթապէկէն ֆերման կ'ստանայ աթոռին հաստատութեան համար: Նմանապէս, ըստ խնդրանքի Ստեփանոս Նպիսկոպոսի, Գրիգոր կաթողիկոս Պահլավունի Շրջաբերական թուղթ մը կը զրկէ և կը վաւերացնէ Նորափանքի սուրբ ուխտը իր սեպհական վիճակներով: Ստեփանոս Նպիսկոպոս մեծ գործունէութենէ վերջ կը վախճանի 1216ին և կը թաղուի Նորափանքին մէջ, յառաջագոյն հողալով և եպիսկոպոս ձեռնադրել տալով իր քեռորդին Սարգիսը (որ յաջորդեց անոր) և Սարգիս Նպիսկոպոսը զրկեց Իւսնէ Աթապէկէն պահանջելու Աւագ խաչը որ ուրիշ երկու խաչերուն հետ գրաւի դրուած էր. երկու խաչերը կը կոչուէին Կամարակալ և քիթիղմակալ, Հաղարանեանք Վասակ յափշտակած էր այս երկու խաչերը և տարած էր իր Կեչառու վանքը(*): Սարգիս եպիս-

կոպոս Իւսնէ Աթապէկէն ստացաւ Աւագ խաչը և հաստատեց Նորափանքին մէջ, որուն համար Օրբելեան Լիպարիտ 1000 զահկան ոսկի ծախսած էր, իբր Նախկին ժառանգորդ այս կողմերուն: Քանի մը տարի յետոյ մեծ վեճ մը ծագեցաւ այս խաչին նկատմամբ, Սիւնեաց Նպիսկոպոս ստեփան երկրեղկելուն պատճառաւ, վասն զի Տէր Յովհաննէս, Ստեփանոս Նպիսկոպոսի հօրեղբորորդին, որուն վիճակեցաւ Տաթևը(*), իր հետ տանել կ'ուզէր նոյն Աւագ խաչը, այս պատճառաւ դիմում եղաւ Իւսնէի որ ժողով գումարեց եպիսկոպոսներով, մեծամեծ իշխաններով, իւրաւապէսներով, որոնց հետ կային քաղաքներու շէյխեր և մեծ դատներ և վճիռը տուին Սարգիս արքեպիսկոպոսին ինպատակ, վասնզի ան էր որ գերեթափ բրած էր Աւագ խաչը և եւ որ ոք զգերիւս թափէ՝ ոչ է ստացողին յայնմհետէ, այլ գերեթափին: Սարգիս Արքեպիսկոպոս մեծ Լիպարիտին հետ խորհրդակցելով կը սկսի միտաբան մեծալիւստակ աշխատանքով և անշափ ծախքով 1216ին շինել Նորափանքի գեղեցկայարմար եկեղեցին, և եօթն տարիէն ութ խորաններով կ'աւարտեն ՈՒԲ (= 1223) թվականին, և մեծահանդէս ժողովով, եպիսկոպոսներով, վարդապետներով, իշխաններով, ազատներով և տանուտերներով սուրբ տաճարին նաւակատիքը կը կատարեն, որոնց հետ էր մեծ իշխան Բուպակ, ուր նուրակերտ քաւարանին իր հալալ արդիւնքէն ու կառուածներէն կը պարգեւէ իր Աղբիւրիս ագարակը իր սահմաններով, անշրջի վայրե-

(*) շին եպիսկոպոսական Աթոռի աւերակներու վրայ զեռ նոր ծլած էր նոր Աթոռը և հաւանոր Տաթևը միւս կողմէ բարձրացուց իր վաղեմի, պատմական իրաւանց զորքը:

Բայց խաղաղապէս Սարգիս Արքեպոս. չուզելով հակառակութիւն և եկեղեցիին օցտուռն, կը համաձայնի տալ Տաթևի Յովհաննէս Նպիսկոպոսին բոլոր վիճակը, իսկ Նորափանքի Աթոռի համար կ'առնէ միայն, Վայոց Ձոր գաւառը, ձաւուկը (Ձաւրի) և Նախիջևանը:

Այս կարգադրութենէ վերջ, Սարգիս Արքեպոս. գնաւ Հայոց հոստանդին Բարձրբերդի կաթողիկոսի մօտ, անորմէ ստացաւ շրջաբերական թուղթ որպէս զի վերոյիշեալ երեք գաւառները հաստատուն վիճակ լինին Նորափանքի եկեղեցիին: Երկու Աթոռները իրարմէ անկախ յառաջ գացին միեւն Ստեփանոս եպիսկոպոս Օրբելեանի իշխանութեան ժամանակ:

նի Երեւանցի Ստեփանոս Նիդաղարանցի: Քանի մը տարի առաջ հոն կը բնակէին Վանցի և Ալաշկերտից զաւթական հայեր, որոնք 1856 - 1860 ջրբուծած են Ուրիշ տեղեր: Նորափանք հոչակաւոր ուխտատեղի և նշանաւոր մենաստան եղած է և Օրբելեանց քաջագործ ցեղի դամբարանը:

(*) Կէչառուց կամ Կէչառուս Աբարատայ Նիգ և Վարամուշները գաւառներու սահմանի վրայ կը գտնուէին. երբեմն անուանի զիւղէ և նոյնանուն հողակալ մենաստանի, Պահլավունիներու պանծալի զատակերաններէն մին՝ որուն կիսակործան մնացորդները միայն մեզ գտնած են: Ան՝ ծանօթ է անուան ծաղաւրը և ժԱ. Գաբէի առաջ չի յիշուիր (տե՛ս Բնագր. Բառ., էջ 364 - 370, Ն. Ս. Էփրէիկեան):

րով, մեծ ձորովն որ Թմաձոր կը կոչուի իր սահմաններովն, մինչև Գանձակ, որ Հայ-րեմեայց թափ կը կոչուի, և կը հրամայուի անխախտ պայմանաւ արձանագրութիւն մը ունենալ և ի յիշատակ իրեն՝ ամէն տարի իր մօրը համար տասն պատարագ ընել, և Սարգիս Արքեպիսկոպոսի ձեռքով կատարել այս վճիռը: Նորաշէն Ս. Կարապետի եկեղեցին գետնէն չորս աստիճան բարձր՝ կաւ մարակապ է և ամբողջապէս շինուած ոլոր-բատաշ կարմիր քարէ չորս որմնակից վա-յելչաձև սիւներու վրայ. փառապանծ կաթողիկէն 1840 թուին չարժէն արդէն զըրկուած լինելով, բարեպաշտ ուխտաւորաց աշխատութեամբ այժմ ծածկուած է փայտով և հողով: Պատուհանք չորս են և դուռն մի՝ արևմտակողմը: Բացի աւագ խորանէն ունի ութը խորաններ ևս, երկու երկու իւրաքանչիւր վրայ շինուած, բեմին և դրան առջև ձախ հողմերը: Տաճարին որոնց վրայ կան արձանագրութիւնք զանազան նուիրատուութեանց վերաբերեալն: Ս. Կարապետ նորաշէն եկեղեցիին Սարգիս Արքեպիսկոպոսի ձեռքով գրուած արձանագրութիւնը կը գնենք հոս. «Ո՛ր ժամանակի թագաւորու-թեանն որդւոյ թամարին Լաչային, յամիր սպասաւարտութեան Հայոց և Վրաց Շահնահի, և յԱթաբէկութեան Իվանէի հաւա-նորաւ Նորին, ես մեծուցեալ ծառայ Գըրիստոսի Բուպակ՝ իշխանաց իշխան, եկի ի նաւակատիւս սուրբ եկեղեցւոյս Նորավանդից առ երջանիկ հայրապետս մեր Տէր Սարգիս և ընծայեցի ի հալոյ հայրենեաց իմոց զոր իմ բազկաւս առեալ էի յալազգեաց և իմ արեամբն թափեալ, և իմ պարոնալքն մեծ սիգելով այլ ինձ էին որոշեալ, զԱղբերխ գիւղ իւր ամէն ստանաւան, ի սուրբ եկեղեցին Նորավանդիցս ի սուրբ Կարապետ և ի սուրբ Նախավկայս տուի, ազատ յամեն հաւա-կաց, և չունի ոք հրաման յայսմհետէ մինչև յաւիտեան հակառակիլ այսմ, ոչ յաւա-զաց, ոչ յիմոց, ոչ յօտարաց, և Տէր Սարգիս և այլ միաբանքս հաստատեցին ի տարուան տասն պատարագ ի Վարդապետին տաւնին իմ մարն հոգւոյն: Արդ թե ոք յանդգնի և հակառակիլ ջանայ այսմ տրիցս մասն և բաժին զՅուդային և զխաչահանուացն առ-ցէ . . . և իմ ազգք և զաւակք չունին ոչ ձեռն: ոչ իշխանութիւն ի վերայ այսմ տեղեաց . . . ի թուիս Հայոց ՈՂՅՁ (= 1223):

Նորաշէն Ս. Կարապետ եկեղեցւոյ շէնող Սարգիս Արքեպիսկոպոս գրեց սոյն հա-կիրճ յիշատակարանը զանգակատան գրան-ճակատին վրայ. «Եմ Տէր Սարգիս քեռուր-դի Տէր Ստեփաննոսի Սինեաց արքեպիս-կոպոսի շինեցի զեկեղեցին ՚ի բարեխա-սութիւն ինձ և Լիպարիտին և նախնեաց մե-րոց և երկուց հարազատ եղբարցն որ սպա-նան յալազգեաց պատերազմաց, վասն որոյ տղաչեմ հանդիպողացդ յիշել զմեզ ի Գրիստոսս:

Եկեղեցիներէն և դամբաններէն շատ քի-չեր կը մնան այս հոչակաւոր մենաստա-նէն, պարիսպներու հիմերը քայքայուած են 1840ի մեծ երկրաշարժէն, միայն հիւսիսա-յին կողմին կանգուն է և մեծ դրան վրայ կը կրէ աւետարանիչներու չորեքեկեայ քանդակները, իսկ գտնուած եկեղեցիներն հետեւելները են. Ս. Ասեփանոս հին, և ժու-մասուն կամ աղօթարան շինուած Սմբատէն՝ եղբայր Տարսայիկի, որուն շինածն է Ս. Գրիգոր և Պայազատներու տոմարն զամբա-նարան, Ս. Կարապետ վերջնոյս հորմէն՝ Լի-պարիտէն, և Ս. Աստուածածին՝ Բուրթնէն: Նորաշէն Ս. Կարապետ եկեղեցին շատ խը-նամօք շինուած էր և զարդարուած փար-թամուկեամբ գոյքերու և ժառանգութիւն-ներու, ինչպէս կը հասկցուի պատմիչէն. նոյնը այժմ անշքութեան մատնուած է և կը մնայ ալազդեան ձեռքը, զրկուած ըլ-լալով հնութեան փառապանծ գերեթէն, ո-րուն փոխարէն այժմ փայտայարկ շինու-թիւն մը կայ. կանգուն է համակ սքառաւ զարմիր քարերով, գետինէն կը բարձրանայ չորս աստիճաններով, արտաքուստ ունե-նալով սրանկէն խորշը, ինչպէս Անիի կաթողիկէն և այլ քանի մը եկեղեցիներ, երկայնքով և տանքով համալսի քառա-կուսի ձևով, հաստատուած չորս որմնայաք սիւներու վրայ, չորս պատուհաններով, ու-թը խորաններով կամ սեղաններով, ինչ-պէս կը գրէ պատմիչը. աւագ խորանէն զատ, խորանները երկու երկու իրարու վը-րայ կանգնած են բեմին և դրան աջ և ահ-եակ կողմերը, որ բացուած է արևմտեան կողմէն ուր կայ չքնադառն ժամատունն կաթողիկէով և զանգակատնով, որմնայաք վեց սիւներու վրայ, վեց լուսամուկներով, որոնց միջի խաչագուրիս սիւնակները բոլոր կողմերով ունի ճարտար դրուագներով քան-

դակներ, և դրան կիսաբուլորի վրայ կայ խալ մը, փրկական անուան համառօտ վերագրութեամբ, Տէր Աստուած Յիսուս Քրիստոս: Հիւսիսային կողմն ալ քանդակ պատկեր մը՝ կարճագոյն և սաղաւարտով հեծեալ երիտասարդի մը (Ուրբէնեանց քաջերէն մէկը) որ կը մենամարտի վագրի կամ առուի ղէմ, իսկ ժամատան դրան ճակատին քարի վրայ բազմած Տիրամօր պատկերը, (որուն տակ գրուած է բանն Աստուած զբուռագեալ քանդակի վրայ) Յիսուսը գիրկը ունենալով, վերը Նօզին Մուրը. ալ և ձախ կողմը քանի մը ծերունիներ, թուական 1221 (Սիսական, էջ 184—187):

Կան նաև ուրիշ արձանագրութիւններ ժամացան և հոյակապ դամբարաններու վերաբերեալ, ուր կը հանգչին բարձրաստիճան եկեղեցականներ և նշանաւոր անձնաւորութիւններ (Սիսական, էջ 187—205):

ՄԿՐՏԻՉ ԱՐԲԵՊՍ. ԱՂԱԽՆՈՒՆԵՆ

ԹԱՐՈՐ ԼԵՌԸ

Մեր Տիրոջ, երկրաւոր կեանքին, ամենափառաւոր ու նշանակալից գորուզներէն մին է Պայծառակերպութեան կամ Այլակերպութեան դէպքը, որ հին հայոց Վարդապետի կամ հայկական հին Ամանորի տօնին հետ ընդունուելով և միացուելով, Հայ Եկեղեցւոյ մեծագոյն տօներէն մէկը հռչակուած է: Աւետարանները թէ և չեն յիշեր Այլակերպութեան լիբան անունը (տես Մատթ. Ժէ. 1-3, Մարկ. Թ. 1-12, և Ղկա. Թ. 28-36) սակայն հինէն ի վեր ընդունուած աւանդութիւն մըն է թէ Դաւիթին նահանգին մէջ գտնուող Թաբոր լեռան վրայ տեղի ունեցած է այս հրաշալի դէպքը: Առաջին երկու Աւետարանները կ'ըսեն որ օբարձը և առանձինն լեռան մը վրայ է որ տեղի ունեցաւ Յիսուսի Այլակերպութիւնը. «Եւ Յիսուս հանէ զնոսա ի լեռան մի բարձր առանձինն»՝ ածականներ՝ որոնք լաւ կը պատշաճին Թաբոր լեռան համար: Վասնզի կրնայ ըսուիլ որ բարձր լեռ մըն է Թաբոր, իսկ առանձին լեռ մը ըլլալը տարակոյս չի վերցներ, վասնզի

եզրայէլի գաւառն մէջ սունկի պէս դէպի վեր բարձրացած գագաթ մըն է Թաբոր լեռը:

Հին Կտակարանի մէջ Թաբոր կամ Թաբորական լեռ ծանօթ անուն մըն է. մէկէ աւելի անգամներ յիշատակուած կը գտնենք զայն Աստուածաշունչի զանազան գրքերուն մէջ (Յես. ԺԹ. 22, Դատ. Ա. 9 և Դ. 4-14, Սաղմ. ԺԸ. 13, Երեմիայի ԽԶ. 18 և Ուլ. սէի Ե. 1): Յետուի ժամանակ, Ս. Երկրին 12 ցեղերուն միջև բաժանման ատեն Թաբոր լեռը Իսաակի և Զարուզնի ցեղերուն միջև լորբև սահմանագրութիւն ընդունուեցան: Ս. Երկրին Խորայէլի 12 ցեղերուն միջև բաժանումէն 150 տարի վերջը, երբ հրեաները հազիւ թէ տէր դարձած էին Աւետիաց Երկրին, չըվակայ թշնամի ցեղերէն՝ Քանանացիք, որոնք կը բնակէին միծաւառամբ «Առ ծովեզերքն [Միջերկրականի] և առ Յորդանանաւ» (Թիւք ԺԳ. 30) սկսան ճնշել Խորայէլացիները: Դերովբա մարգարէութիւն խորայէլի փրկութեան գործին զբաղուելու անցաւ և պատերազմական գործողութեանց կեդրոն դարձուց Թաբոր լեռը: Դերովբան հոն գաղտնօրէն 10,000 մարդիկ բանակեցուց Բարակ զօրապետի հրամանատարութեան ներքև և փառաւոր շաղթանակ մը տարաւ Քանանացւոց դէմ: Դատաւորաց գրքին մէջ սա ձեռով ներկայացուած է այս հերոսական դէպքը, օճև առաքեաց Դերովբա և կոչեաց զԲարակ . . . և ասէցնա. Ո՞չ ապաքէն հրաման ետ քեզ Աստուած Խորայէլի և ասէ. Երթիցես ի լեռոն Թաբովը, և առցես ընդ քեզ տասն հազար արանց յորդույն Նեփթալիմայ և յորդուցն Զարուզնի և տարցես ընդ քեզ ի հեղեղատն Կիսունի, ի վերայ Սիսարայ ի լեռանի գորուն Յարինայ և զօրաց նորա և կառաց նորա և մատնեցից զնա ի ձեռս քո . . . Եւ ազգ եղև Սիսարայ եթէ ել Բարակ ի լեռոն Թաբովը. եւ զուամարեաց Սիսարայ զամեն նախ կառս իւր ինչհարիւր կառս երկաթեղէնս և զամենայն զօրսն ընդ իւր՝ ի հեղեղատն Կիսունի . . . և էլ Բարակ ի լեռնէն Թաբովը, և տասն հազար արանց զհետ նորա: Եւ զարհուրեցոյց Տէր զՍիսարա և էլ Սիսարա ի կառաց իւրոց և փախեաւ հետիոտս. Եւ Բարակ զհետ մտեալ երթալ զկնի կառացն. Եւ անկաւ ամենայն բանակն Սիսարայ սրով սուսերի և ոչ մնաց և ոչ մի» (Դատ. Դ. 4-16): — Այդ ժամա-